

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱԽԱՐԱՐԱՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԶՈՐԻ ԼԵՌՆԻԿԻ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԺԳ.00.02 – «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (անգլերեն
լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ.Բյուզոսվի անվան
պետական լեզվահասարակագիտական համալսարանում

Գիտական դեկավար՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ի. Կ. Կարապետյան**

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

մանկավարժական գիտությունների
դոկտոր, դոցենտ **Ն. Ե. Դայան**
մանկավարժական գիտությունների
թեկնածու, պրոֆեսոր **Կ. Մ. Կարապետյան**

**Առաջատար
կազմակերպություն՝**

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան)

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. մայիսի 30-ին
ժամը 12.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանում գործող <<ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտա-
կան խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. ապրիլի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝


Ա.Հ.Սարգսյան

ԱՏԵՎԱԿՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Արդի փոլում ակադեմիական գրագրությանը՝ որպես գրավոր հաղորդակցության միջոցի, տրվում է առանձնահատուկ կարևորություն: «Ակադեմիական գրագրություն» դասընթացն ընդունված է միջազգային չափանիշներով: Այն բազում տարիներ դասավանդվել է Եվրոպայի և Ամերիկայի առաջավոր երկրների ուսումնական հաստատություններում, նրա տարրերը մասամբ ուսումնասիրվել են <<բուհական համակարգում:

Արդի փոլում օտարապեսու ակադեմիական գրագրության ուսուցման հիմնական թերությունն այն է, որ այն իրականացվում է առավելապես քերականական որոշակի կառուցյների յուրացման նպատակով: Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ակադեմիական գրագրության ուսուցման տարբեր խնդիրները մշտապես եղել են լեզվաբանների, մեթոդիստների տեսադաշտում: Կարելի է առանձնացնել գրավոր խոսքի զարգացման վարժություններին (Մ. Գ. Աստվածատրյան 1985, 2015, С. Փ Շատիլով 1986, Խ. Դ. Գալյեկովա 2003, Վ. Լ. Տկալկին 1983 և այլք), գիտական ոճին (Մ. Գ. Արքահամյան 1982, Լ. Կ. Եզեկյան 2007, Հ. Յ. Պետրոսյան 2014, Խ.Ա Բորե, Մ.Վ. Բայտրիք, Ս.Ա. Վաշնյակովա 2006, Ի.Բ. Կորոտկինա 2011, Ղ. Բ. Պոսպելովա 2012, Խ. Ի. Կոլեսնիկովա 2006, Մ. Պ. Սենկևիչ 1976, D. Biber 2006 և այլք), գիտական տերսուի կառուցվածքին (Հ.Յ. Պետրոսյան, Ա. Թ. Մարտիրոսյան 2009, Ի. Վ. Վորոբյեվա, Տ. Ա. Լուկաշովա 2010, A. Apresyan, R. Badeyan, N. Gasparyan 2010 և այլք), գրավոր խոսքի ժանրային առանձնահատկությունների բացահայտմանը (R. Badger & G. White 2000, C. Bazerman 1988, V. K. Bhatia 1993, M. Callaghan, P. Knapp, G. Noble 1993, H. Kay & T. Dudley-Evans 1998, D. Nunan 2008, J. Swales 1990 և այլք), գրավոր խոսքի ուսուցման ռազմավարություններին (Լեզուների իմացության/իրավեկության համաելլուպսական համակարգ/Ուսումնառություն, Դասավանդում, Գնահատում 2005, C. Neville 2010, J. C. Bean, D. Drenk & F. D. Lee 1982, B. Abbs 1984, J. Hartley & A. Branthwaite 1989, I. Leki 1998, A. Oshima, A. Hogue 1999 և այլք), ակադեմիական գրագրության ուսուցմանը (Հ.Յ. Պետրոսյան, Ա. Թ. Մարտիրոսյան 2009, Ն. Հովհաննիսյան, Ն. Գալստյան, Մ. Սողոմոնյան, Մ. Մալխասյան 2014, Е.Ա. Կնյայեա 1999, Ի.Բ. Կորոտկինա 2011, А. Г. Мартынова

2006, D. Biber & B. Gray 2010, A. Brooks & P. Grundy 1991, C. Geisler 1991, H. Glasman- Deal 2010, B. Gray & V. Cortes 2011, M. Hairston 1998, J. Harmer 2005, T. Hedge 1988, L. L. Irvin 2010, H. Johnson 1996, R. R. Jordan 1997, 1999, B. Kamler & P. Thomson 2006, I. Leki 1998, A. Oshima, A. Hogue 1999, A. Penrose & K. Steven 2004, D. W. Smit 2004, J. Swales & C. Freak 2012, M. Terry & J. Wilson 2010, J. Trzeciak & S. E. Mackay 1994 և այլք, խոսքային վերլուծությանը (M. McCarthy 1991, D. Nunan 1993, 2008 և այլք), ակադեմիական բառապաշտի ուսուցմանը (M. McCarthy 2008, A. Penrose & K. Steven 2004, S. Thomas & T. P. Hawes 1994 և այլք) նվիրված աշխատանքները:

Որոշ մեթոդիստներ հավասարության նշան են դնում օտարալեզու ակադեմիական գրագրության և թերականության ուսուցման միջև: Հիմնական պատճան այն է, որ օտարալեզու ակադեմիական խոսքի ուսուցումը ենթադրում է հստակ պատկերացում տալ օտարալեզու ակադեմիական գրավոր խոսքի գործառական ոճերի մասին: Այստեղ խոսքը նաև ոճաժանրային փոխներթափանցման մասին է, քանի որ ուսանողները կամա-ակամա համեմատում են մայրենի և օտար լեզուների գրավոր խոսքը ոճաժանրային կտրվածքով:

Ավանդաբար օտար լեզվի ապագա ուսուցիչների համար կարևորվում է ընթերցելու, խոսելու և ունկնդրելու հմտությունների ձեռքբերումը: Ակադեմիական գրագրությունը ևս պետք է իր հիմնավոր տեղը գտնի նշված լեզվական հմտությունների շարքում:

Ակադեմիական գրագրությունը կատարվում է գիտական ոճի ենթաօճով, որին բնորոշ են գիտական ոճի հիմնական բնութագրերը: Գիտական ոճը բավականին լայն հասկացություն է: Ըստ Էության, այն ներառում է տարատեսակ նշանակությամբ և բովանդակությամբ ժանրերի մի ամբողջ շարք՝ գիտական հորիված, ատենախոսություն, ռեֆերատ և այլն:

Մեր դեպքում խոսքը օտարալեզու ակադեմիական գրագրության կոմպետենցիայի ծևակորման և զարգացման, ինչպես նաև ակադեմիական գրագրական կարողություններին ուղղված վարժությունների, տեխնոլոգիաների մշակման ու գործադրման մասին է, որոնց նպատակն ու խնդիրները տարբեր դասընթացներում փոփոխվում են:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ներկա փուլում անգերենի ակադեմիական գրագրության կարևորության, այն կազմող

տարրերի ոչ պատշաճ կերպով հետազոտվածության, ակադեմիական գրագրության ուսուցման նոր ծրագրերի մշակման, ուսուցման մոդելների, տեխնոլոգիաների և ռազմավարությունների ընտրության ու կիրառման անհրաժեշտությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է ուսումնասիրել ակադեմիական գրագրության ուսուցման տեխնոլոգիաները, մշակել ակադեմիական գրագրության ուսուցման տեխնոլոգիաների կիրառման օրինակելի մեթոդական կաղապար, որն արդյունավետորեն կսիրառվի ակադեմիական գրավոր խոսքի ուսուցման դասընթացներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆ անգլերենի ակադեմիական գրագրության ուսուցումն է լեզվաբանական ուղղվածություն ունեցող բուհերում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՐԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՍԱԿԱՎՈՐՈՒՄ ակադեմիական գրագրության ուսուցման տեխնոլոգիաների կիրառման մեթոդական համակարգն է մասնագիտական անգլերենի դասընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ. Օտարալեզու ակադեմիական գրագրության մասնագիտական դասընթացի արդյունավետությունը կարելի է բարձրացնել, եթե հաշվի առնվեն օտարալեզու ակադեմիական գրագրության ուսուցման տեսական և մեթոդաբանական հիմքերը, արտերկրում կուտակված հարուստ փորձը, ինչպես նաև բուն ակադեմիական գրագրության, գործնական անգլերենի դասընթացների նպատակն ու խնդիրները և ըստ այդմ ստեղծվի անգլերենի ակադեմիական գրագրության ուսուցման դինամիկ կաղապար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Հետազոտության նպատակով և գիտական վարկածով պայմանավորված՝ անհրաժեշտաբար լուծվել են հետևյալ խնդիրները.

1. Վերլուծվել է տվյալ հիմնախնդրին վերաբերող գիտամանկավարժական և մեթոդական գրականությունը,
2. բացահայտվել են ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացում հանդիպող տիպական դժվարությունները,
3. ճշգրտվել են օտարալեզու ակադեմիական գրագրության դասընթացի նպատակն ու խնդիրները՝ հաշվի առնելով թե՛ բուն դասընթացը, թե՛ անգլերենի ուսուցման գործնական դասընթացները,

4. հստակեցվել են ակադեմիական գրագրության ուսուցման ժամանակակից ռազմավարությունները և տեխնոլոգիաները գրելու ալանավորման, նախագծման, վերանայման, վերատուգման փուլերում,
5. մշակվել է օտարալեզու ակադեմիական գրագրության ուսուցման, գրավոր ակադեմիական կոմպետենցիայի ձևավորմանը նպաստող վարժությունների համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՑԵԼ.

- խոսույթի վերլուծության (A. G. Martynova 2006, E. Hatch 1992, D. Nunan 1993, 2008. M. McCarthy 1991),
- գրավոր խոսքի ժանրային վերլուծության (R. Badger & G. White 2000, V.K. Bhatia 1993, M. Callaghan, P. Knapp, G. Noble 1993, H. Kay & T. Dudley-Evans 1998),
- ակադեմիական գրագրության ռազմավարությունների մշակման և կիրառման (I. Leki 1998, J. C. Bean, D. Drenk & F. D. Lee 1982),
- գիտական հետազոտական գրավոր խոսքի ուսուցման (H. Glasman-Deal 2010, J. Swales 1990),
- ակադեմիական գրավոր խոսքի վերլուծության (D. Atkinson 2003, M. Hairston 1998, T. Hedge 1988, L. L. Irvin 2010),
- գրավոր խոսքի ռեֆինուրի վերլուծության (D. Biber 2006, D. Nunan 2008),
- ակադեմիական գրագրության նպատակներով անգերենի ուսուցման (R. R. Jordan 1999, A. Kay 1996, A. Oshima, A. Hogue 1999, J. Swales & C.Freak 2012, J. Trzeciak & S. E. Mackay 1994) տեսությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Առաջադիր խնդիրների լուծման ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

1. *Տեսական՝* հիմնախնդրին վերաբերող դիդակտիկական, լեզվաբանական և մեթոդական գրականության ուսումնասիրություն, ակադեմիական գրագրության ուսուցման ոլորտին վերաբերող տեքստերի և խոսույթների վերլուծություն:
2. *Էմպիրիկ հետազոտության մեթոդներ.*
 - ա) դիբում. տվյալներ և փաստեր ենք հավաքագրել և մշակել թեմայի ուսումնասիրման և գործնական կիրառման համար,

- բ) թեսլրավորում. բացահայտել ենք գիտափորձին մասնակցած սովորողների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները, մանկավարժության սուբյեկտների անձնային և մասնագիտական որակները, պարզել թեմայի լեզվաբանական առանձնահատկությունները,
- գ) փորձարկում, որ նպաստել է մեր հետազոտական թեմայի վերաբերյալ մեթոդական հանձնարարականների գործնական կիրառմանը:
3. Վիճակագրական՝ փորձարարական ուսուցման արդյունքների տվյալների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸՆ այն է, որ

- ստեղծվել է վերջնարդյունքի, գործընթացի և ժանրի վրա հիմնված մոտեցումների համեմատական վերլուծությամբ ակադեմիական գրագրության ուսուցման դինամիկ, քառաստիճան մոդել /հեֆերատկության աշխատանք-ավարտական աշխատանք-հոդված/,
- ուսումնասիրվել և դասակարգվել են ակադեմիական բնագրերի և խոսույթների ընտրության, նրանց միջոցով ակադեմիական գրագրության ուսուցման սկզբունքները և մեթոդները,
- մշակվել է նշված մոդելի շրջանակներում ակադեմիական բնագրերի և խոսույթների շուրջ աշխատանքի մեթոդական համակարգ, որի արդյունավետությունը հիմնավորվել է համպատասխան փորձարարական ուսուցման ընթացքում և նրա արդյունքների վերլուծությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԼՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

- ուսումնասիրվել են ակադեմիական գրագրության ուսուցմանը վերաբերող մեթոդական տեսությունները,
- բացահայտվել են ակադեմիական գրագրության ուսուցման առանձնահատկություններն անգլերենի մասնագիտական դասընթացում,
- հատակեցվել են ակադեմիական գրագրության ուսուցման բովանդակային և գործառական բնութագրերը մասնագիտական անգլերենի դասընթացում,

- ստեղծվել է ակադեմիական գրագրության ուսուցման արդյունավետ կաղապար, որն ընկած է առաջարկվող մեթոդական համակարգի հիմքում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

- Ակադեմիական բնագիր տեքստերի և դրանցով աշխատանքի կատարման համար մշակված վարժությունների համակարգը կարող է հիմք հանդիսանալ սովորողների ակադեմիական գրավոր խոսք կառուցելու կարողության և հմտությունների զարգացման ու ձևավորման համար:
- Ակադեմիական գրագրության ուսուցման ներկայացվող մեթոդական համակարգը և գործնական բնույթի հանձնարարականները կարող են կիրառվել նաև անգերեն լեզվի ուսուցման տարբեր տեսանկյունները զարգացնելու համար:
- Ակադեմիական գրագրության ուսուցման հիմնական մոտեցումների հիմքում ընկած որոշակի ցուցումներ և երաշխավորություններ կարող են օգտագործվել ինչպես անգերեն լեզվի մասնագետների, այնպես էլ անգերենի ոճաբանության, բառագիտության և դասավանդման մեթոդիկայի հարցերով գրադարձ անձանց կողմից առարկայական ծրագրեր կազմելու, ինչպես նաև սեմինարների, անգերեն լեզվի մասնագետների վերապատրաստումներ իրականացնելու ժամանակ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՓՈԽԼԵՐԸ: Գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է երեք հիմնական փուլով:

- Առաջին (2012-2013 թթ.) փուլում որոշվել են հետազոտության թեման, շարադրանքի պլանը, հստակեցվել են հետազոտության հիմնական հասկացությունները և կարգերը, առաջարկվել են վարկածն ու խնդիրները:
- Երկրորդ (2013-2014 թթ.) փուլում հավաքագրվել և ուսումնասիրվել է հիմնական գրականությունը, շարադրվել է առաջին գլուխը, ուսումնասիրվել են ՀՀ-ում և արտերկրի զարգացած կրթական ավանդույթներ ունեցող բուհերում սովորողների ակադեմիական գրագրության կարողության ձևավորման ծրագրերը, մոտեցումները, ուզմավարությունները:

- Երրորդ (2014-2015 թթ.) փուլում իրականացվել է փորձարարական ուսուցում, որի նպատակն է եղել ակադեմիական գրագրության գոյություն ունեցող դասընթացների ուսումնասիրությամբ բացահայտել դրանց կազմակերպման թերությունները և բարելավել դրանք՝ կիրառելով ակադեմիական գրագրության ուսուցման նոր ուսումնավարություններ և տեխնոլոգիաներ, ինչպես նաև հիմնավորել առաջարկվող մեթոդիկայի արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ

ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ապահովում են կիրառված հիմնադրույթներով և տեսականորեն ու գործնականորեն հիմնավորվում է մեթոդների համայիր գործածությամբ, հետազոտության օբյեկտի և առարկայի դիդակտիկական և մեթոդական առանձնահատկություններին համապատասխան և հետազոտության արդյունքում ստացված տվյալների հուսալիությամբ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԵՆ.

1. Ակադեմիական գրագրության մշակույթի ծևավորման կարևոր նախապայմաններից է գրագողության նկատմամբ համապատասխան վերաբերմունքի առկայությունը, գրագողությունից խուսափելու ուսումնավարություններին ու միջոցներին տիրապետելը:
2. Գործընթացային մոտեցման տեսանկյունից առաջնային է գրավոր տեքստի կամ խոսույթի ստեղծումը, որի համար հեղինակը պետք է կարողանա պլանավորել գրավոր խոսքի ստեղծման գործընթացը, իրականացնել փուլ առ փուլ՝ պահպանելով գրավոր խոսույթի կառուցման նորմերը:
3. Նոյն տրամաբանությամբ՝ դասավանդողները պետք է հաշվի առնեն ուսանողների և լեզվակիրների լեզվամտածողության, մտածելակերպի և ճանաչողության տարրերությունները, ինպես նաև այն, թե ինչ մոտեցումներով է (վերջնարդյունքի, գործընթացի և ժանրի վրա հիմնված) ուսուցանվում ակադեմիական գրագրությունը: Նշված մոտեցումների հստակեցումը կարևոր է թե՛ դասընթացը նախագծելիս, թե՛ ուսուցման մեթոդական գործիքակազմն ընտրելիս, թե՛ ուսուցման ուսումնավարությունները և ընթացակարգերը որոշելիս և կիրառելիս:
4. Ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացում փոխներգործուն, անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների, ուսումնավարությունների

մեթոդների, հնարների կիրառումը կարող է արդյունավետ լինել եթե ապահովում է սովորողների ակադեմիական գրագրության կոմպետենցիայի շարունակականությունը և անընդհատությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅՈՒՆԸ իրականացվել է Երևանի

Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի «Մանկավարժության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի» ամբիոնում, հրատարակված աշխատանքներում, Երևանի պետական համալսարանի V միջազգային գիտաժողովում և փորձարարական ուսուցման բազա հանդիսացող՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի համապատասխան խմբերում: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են տպագրված հրապարակումներում (տե՛ս սեղմագրի վերջում ներկայացված հրապարակումների անվանացանկը):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱԿԱԼՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը բաղկացած է 135 համակարգչային էջից: Այն ներառում է ներածություն, երկու գլուխ, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ, հավելվածներ, 5 աղյուսակ և 8 գծապատճեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են ատենախոսության նպատակը, գիտական վարկածը, խնդիրները, հետազոտության օբյեկտը, առարկան, մեթոդական հիմքերը, ներկայացվել են հետազոտության փուլերը, շարադրվել են գիտական նորույթը, աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլուխը («Ակադեմիական գրավոր խոսքի լեզվանական հատկանիշները») բաղկացած է երեք Ենթագլխից.

1.1. «Ակադեմիական գրագրություն» դասընթացի ուսումնասիրման հիմնախնդիրը լեզվաբանական բուհում» Ենթագլխում ներկայացվում են ակադեմիական գրավոր խոսույթի առանձնահատկությունները, սահմանվում է «Ակադեմիական գրավոր խոսույթ» հասկացությունը, բացահայտվում են նրա

բովանդակային բնութագրերը: Քննության են առնվում ոչ միայն լեզվական, այլև մեթոդական տիպականացման հարցեր՝ շեշտադրելով դրանց մշակութային հայեցակերպը: Հիմնախնդրի մեթոդաբանական հարցերի լուծումը պայմանավորել ենք մի շարք մանկավարժական սկզբունքներով: Դրանցից կարողութել ենք՝ գիտականության սկզբունքը, տեսության և պրակտիկայի հետ կապի սկզբունքը, հաջորդականության, մատչելիության սկզբունքը, անձի գործունեության ակտիվության՝ սովորողակենտրոնության սկզբունքը և այլն:

1.2. «Ակադեմիական գրավոր խոսույթի առանձնահատկությունները»

Ենթագլխում բացահայտվում են ուսանողների խոսությային իրազեկության ձևավորման առանձնահատկությունները, գրավոր և բանավոր խոսույթների տարրերությունները՝ դիտարկելով դրանք ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական, գործարանական մակարդակներում: Նշվում է, որ ակադեմիական գրավոր խոսույթի ուսուցման նպատակը սովորողներին օգնելն է՝ անցնելու գիտելիքի գճային շարադրումից դրա շրջափուլային փոխակերպմանն: Շեշտադրվում է այն գաղափարը, որ հեղինակը պետք է գործածի տարաբնույթը ոճաժանրային միջոցներ՝ գրավոր խոսույթի ամբողջականությունը պահպանելու, նրա բովանդակությունը հաղորդելու համար: Դրանցից առանձնացվում են հղումը, փոխատեղումը, զեղչումը/ելիպսիս/, կապակցումը և բառային կապերը: Ակադեմիական գրավոր խոսքին բնորոշ են բառերի հատուկ շարադասությունը և տարրերակիշ կառույցները: Ներկայացվում են այն կաղապարները, որոնք բնորոշ են ակադեմիական գրավոր խոսքին: Հանգամանորեն վերլուծվում են գրագորությունից խոսսակելու ուսումնավարությունները, դրա հաղթահարման ուղիները, միջոցները:

1.3. «Ակադեմիական գրագրության ուսուցման հիմնական մոտեցումները»

Ենթագլխում ընդհանուր գծերով ներկայացվում են ակադեմիական գրագրության ուսուցման հիմնական մոտեցումները: Առաջարկվում է ակադեմիական գրավոր խոսք ուսուցանելիս համադրել բոլոր մոտեցումները՝ ուսուցման արդյունավետությունն ապահովելու համար:

Երկրորդ գլուխը՝ «Ակադեմիական գրագրության ուսուցման մոդելը և նրա արդյունավետության փորձարարական ստուգումը», բաղկացած է երեք ենթագլխոց:

2.1. «Ակադեմիական գրագրության ուսուցման տեխնոլոգիաները»

Ենթագլխում ներկայացվում են ակադեմիական գրագրության ուսուցման

եռափով գործընթացում գործադրվող փոխներգործուն մեթոդներն ու տեխնոլոգիաները:

2.2. «Ակադեմիական գրագրության ուսուցման վարժությունների համակարգը» ենթագիսում ներկայացվում են ակադեմիական գրագրության ուսուցման վարժությունները: Խոսքային վարժություններին համապատասխան՝ հիմնավորվում է գործընթացային մոտեցման արդյունավետությունը՝ արժևորելով նաև տեքստ-նմուշների կարևորությունը: Ճանաչողական փուլում իրականացվում է տարաբնույթ ակադեմիական տեքստերի վերլուծություն, որին հաջորդում է տեքստ-նմուշների հիման վրա սեփական տեքստերի ստեղծումը: Ակադեմիական գրագրության ուսուցման ընթացքում ընկալողական վարժությունները նպաստում են՝ զարգացնելու սովորողների ակադեմիական գրավոր խոսքի լեզվական առանձնահատկությունները, գաղափար են տալիս տեքստի կառուցվածքի, կապակցվածության, տրամաբանական հաջորդականության, ոճի մասին:

Առաջարկվող մոդելի մյուս նորույթն այն է, որ ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացում նախապատրաստական և խոսքային վարժությունները փոխադարձաբար կապված են միմյանց հետ, քանի որ նախապատրաստական վարժությունները հիմնականում ծառայում են լեզվական հմտությունների ձևակորմանը, իսկ խոսքային վարժությունները զարգացնում են սովորողների ստեղծագործական, մտքերն ինքնուրույն ձևակերպելու հմտությունները: Ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացում այս վարժությունները գործադրվում են ոչ թե մեկուսացված, այլ համալիր ձևով:

2.3. «Ակադեմիական գրագրության ուսուցման մոդելի արդյունավետության փորձարարական հիմնավորումը» ենթագիսում հիմնավորվում է առաջարկվող մոդելի արդյունավետությունը: Տեսական և մեթօդաբանական գրականության, ինչպես նաև ակադեմիական գրագրության գործող դասընթացների վերլուծությունը հնարավորություն ընձեռեց հիմնավորել քառաստիճան ինտեգրատիվ՝ «ուժեթրատ-կուրսային-ավարտական աշխատանք-հոդված» մոդելի արդյունավետությունը, որի նպատակն է փուլ առ փուլ ծանոթացնել ուսանողներին գիտական աշխատանք գրելու տեխնոլոգիաներին՝ հաշվի առնելով ակադեմիական գրագրության հաղորդակցական ուազմավարությունները:

Ակադեմիական գրագրության կարողությունների ձևավորումը պայմանավորված է քառաստիճան մոդելի բովանդակային և գործառական բնութագրերով: Դա Ենթադրում է առանձնացնել այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են ռեֆերատ, կուրսային, ավարտական աշխատանք, հոդված գրելու համար: Շեշտադրված է այն գաղափարը, որ ակադեմիական գրագրության ուսուցումը կարող է լինել արդյունավետ, եթե ուսուցման որոշակի փուլում առաջին պլան է մշղում այս կամ այն ժանրի տեքստերի ստեղծման պահանջը: Արդյունավետ է, եթե սովորողներն ակադեմիական գրագրության կարողություններ են ձեռք բերում որևէ կոնկրետ ժանրում կամ ժանրերում: Դրա հետ մեկտեղ՝ նշված մոդելը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ անհրաժեշտ է առանցքային համարել դիդակտիկական մատչելիության և հաջորդականության սկզբունքները: Ուսանողները կվարողանան գիտական հոդվածները ինքնուրույն ծևակերպել, եթե ուսուցման տարբեր փուլերում հայտահարվեն և յուրացվեն ռեֆերատ, կուրսային և ավարտական աշխատանք գրելու դժվարությունները և առանձնահատկությունները:

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի չորրորդ կուրսում իրականացվել է փորձարարական ուսուցում: Փորձարարական խմբի ուսանողների քանակը 34 է, իսկ ստուգողական խմբի ուսանողների քանակը՝ 35: Ուսանողների կարողությունները գնահատվել են 100 բալանց սանդղակով: Փորձարարական ուսուցման ընթացքում համապատասխան տեքստերի, վարժությունների և մեթոդների կիրառման արդյունքում փորձ է արվել ստուգել և զարգացնել ուսանողների ակադեմիական գրագրության կարողությունները: Դրանք են՝

- տեքստի ամբողջականությունն ու կապակցվածությունը ապահովող միջոցներ գործադրելու,
- լեզուն «գրուշությամբ» գործադրելու,
- հուզական բառերից (loaded words), առօրյա խոսքում կիրառվող կաղապարային արտահայտություններից (cliches) խուսափելու,
- գրագողությունից խոսափելու,
- հղման տարաբնույթ ձևեր կիրառելու կարողությունները: (Տե՛ս աղյուսակ 1):

Գիտափորձի արդյունքների համեմատական վերլուծությունը և ստացված արդյունքները ցույց են տալիս, որ փորձարարական խմբում ընդգրկված

սովորողների առաջադիմությունը երկու միավորով բարձր է ստուգողական խմբի ցույց տված արդյունքներից: Ըստ էության, փորձարարական խմբում ավելի բարձր ցուցանիշներ ապահովվում են՝ գրելու ավելի հստակ նպատակադիրորոշման և ծևավորված ճանաչողական դրդապատճառների շնորհիվ: Կարելի է առանձնացնել հատկապես «լեզու զգուշությամբ կիրառելու» և «զրագողությունից խուսափելու» ռազմավարություններ կիրառելու կարողությունները, որոնք ոչ միայն ավելի լավ են ծևավորված փորձարարական խմբում, այլև տարբերվում են բովանդակային առումով: Ակնհայտ է նաև այն, որ մեջբերելու, հղում անելու կանոնների յուրացումը ձեռք է բերվում հետևողական աշխատանքի շնորհիվ: Հետևապես, եթե ռեֆերատ գրել ուսուցանելիս այդ կանոններն հավուր պատշաճի չեն յուրացվում, ապա հետագայում լուրջ դժվարություններ են առաջանում ավարտական աշխատանք կամ հոդված գրելիս:

Աղյուսակ 1

Փորձարարական և ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների ամփոփիչ տվյալներ

Կարողություններ	Փորձարարական խումբ N - 34		Ստուգողական խումբ N - 35	
	Գիտա փորձի սկզբում	Գիտա փորձի վերջում	Գիտա փորձի սկզբում	Գիտափորձի վերջում
1. տեքստի ամբողջականությունն ու կապակցվածությունը ապահովող միջոցներ գործադրելու	93	97	93	95
2.լեզու զգուշությամբ գործադրելու/հեջինգ/	91	96	90	94
3.հուզական բառերից (loaded words), կաղապարային արտահայտություններից(cliches)խուսափելու	93	98	92	96

4. գրագողությունից խոսակելու	92	96	92	94
5. հրման տարաբնույթ ձևեր կիրառելու	91	96	91	94

Այսպիսով, փորձարարական ուսուցումը նշված ուսանողական լսարանում հաստատեց նպատակառուղյամբ, նախօրոք պլանավորած ակադեմիական գրագրության միջառարկայական, ներառարկայական կապերի ապահովմամբ համայիր, քայլ առ քայլ ուսուցումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունից բխում են հետևյալ եզրակացությունները.

1. Մեր կողմից մշակված քառաստիճան /ոճքերատ, կուրսային, ավարտական աշխատանք, հոդված/ մոդելում առաջին պլան են մղվում գիտական աշխատանք գրելու տեխնոլոգիաները և ակադեմիական գրագրության հաղորդակցական ռազմավարությունները: Այն ենթադրում է արդյունք-տեքստի վրա հիմնվող, գործընթացային և ժանրային մոտեցումների համադրում և ինտեգրում:
2. Տեքստ-արդյունքին կողմնորոշված մոտեցումը ենթադրում է, որ ակադեմիական գրագրությունը գրավոր, պատրաստի նախադասությունների, պարբերությունների «ստեղծման» գործընթաց է: Տվյալ մոտեցումն արդյունավետ է գրավոր քննություններին պատրաստվելիս, երբ գնահատվում է ավարտուն խոսքային ստեղծագործությունը:
3. Գործընթացային մոտեցումը ենթադրում է անհատական նշանակություն ունեցող գրավոր «ստեղծագործության ստեղծում՝ ինքնուրույն ընտրված թեմայով և թեմայի ինքնուրույն մեկնարանմամբ: Ժանրային ուսուցումը ոչ թե գծային, այլ շոշափուլային գործընթաց է: Ակադեմիական գրավոր խոսույթի ուսուցման ժանրային մոտեցման դեպքում մեծ նշանակություն ունի սոցիալական իրավիճակը:
4. Գրագողության դեմ պայքարելու համար անհրաժեշտ է ուսումնագիտական գործընթացում ներդնել գիտական էթիկայի

նորմերի պահպանման հստակ ուղեցույցներ, խթանել սովորողների ինքնուրոյն մտածողությունը, բարձրացնել նրանց ակադեմիական ազնվագրման զգացումը, ինչպես նաև ծանոթացնել գրագորությունից խուսափելու եղանակներին և ռազմավարություններին:

5. Ակադեմիական գրագրության ուսուցման տեսանկյունից առավել կարևորվում են այնպիսի տեխնոլոգիաները, ինչպիսիք են անձնական գրառումները /journal writing/, թվարկումը /listing/, խմբավորումը /clustering/, տարեայնորեն իրականացվող կամ ազատ գրառումը /freewriting/: Ըստ էության, այս տեխնոլոգիաները մեկ ընդհանուր՝ մտագրող տեխնոլոգիայի տարատեսակներն են:
6. Ժե՛ փորձարարական, թե՛ ստուգողական խմբերում ուսանողները դժվարությամբ և դժվամությամբ են իրականացնում ոճաբանական և խոսութային վերլուծությունները: Այդ առումով՝ ճիշտ կազմակերպված ակադեմիական գրագրության դասընթացը կարող է լրացնել անգլերենի ուսուցման գործնական դասընթացներում առկա թերությունները:
7. Ակադեմիական գրագրության բաղադրատարրերի յուրացման ընթացքում առաջացած դժվարությունները ենթակա են հայթահարման համակարգված, փուլային, դիդակտիկական մատչելիության և հաջորդականության սկզբունքների գործադրման դեպքում:

Աստենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից իրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. **Բարսեղյան Զ.,** Ակադեմիական գրագրության հիմնախնդիրը. //Բանբեր Երևանի Վ.Բրյուտովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(30), «Լինգվա» հրատ., 2014, էջ 39-44:
2. **Բարսեղյան Զ.,** Գրավոր խոսույթի էությունը //Բանբեր Երևանի Վ.Բրյուտովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(30), «Լինգվա» հրատ., 2014, էջ 297-293:
3. **Բարսեղյան Զ.,** Ակադեմիական գրավոր խոսքի լեզվանական առանձնահատկությունները// Տեսական և կիրառական հոգեբանության

արդի հիմնախնդիրները, 5-րդ միջազգային գիտաժողովի նյութեր,
Երևանի պետական համալսարան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, էջ 60-
64:

4. **Barseghyan Z., Davoyan N.**, Some strategies of teaching academic writing// The current issues in theoretical and applied psychology, the 5th international scientific conference. Proceedings, YSU, Edit Print, 2015, pp. 626-629:
5. **Barseghyan Z.**, The development of the basic approaches to teaching writing//Armenian Folia Anglistika 2(14), YSU, YSU Press, 2015, pp. 118-122:
6. **Բարսեղյան Զ.**, Ակադեմիական գրագրության ուսուցման վարժությունների համակարգը// Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 1(34), «Լինգվա» հրատ., 2015, էջ 123-128:
7. **Բարսեղյան Զ.**, Տեքստը՝ որպես ակադեմիական գրավոր խոսք ուսուցանելու միջոց// Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 2(35), «Լինգվա» հրատ., 2016, էջ 79-84:

БАРСЕГЯН ЗОРИ ЛЕРНИКОВИЧ
ТЕХНОЛОГИИ ОБУЧЕНИЯ АНГЛИЙСКОМУ АКАДЕМИЧЕСКОМУ ПИСЬМУ ПО
ЯЗЫКОВЫМ СПЕЦИАЛЬНОСТЯМ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 – “Методика преподавания и воспитания”(английский язык).

Защита диссертации состоится 30-го мая 2018г. в 12⁰⁰ на заседании специализированного совета 020 “Педагогика” ВАК при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010 г. Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Курс «Академическое письмо» проектируется и организуется в передовых странах Европы и Америки. Разные его аспекты изучаются в вузовской системе РА. Однако, как обязательный предмет он преподается в РА в рамках послевузовского образования.

С учетом необходимости совершенствования методической системы формирования и развития умений и навыков академической письменной речи в профессиональном курсе английского языка, ставится задача разработать соответствующие программы и новые модели; использовать современные технологии и стратегии; проектировать конкретные курсы по продолжительному развитию академической компетенции. Отмеченными задачами обусловлена актуальность данного исследования.

Цель исследования. Разработать модель отбора и применения технологий, направленных на обучение академическому письму.

Задачи исследования:

1. Проанализировать научно-методическую литературу по данной проблеме.
2. Прогнозировать возможные трудности при усвоении академического письма.
3. Определить современные стратегии и технологии обучения академическому письму на этапах его планирования, проектирования, пересмотра и контроля.
4. Выявить стилистические и жанровые особенности академической речи.

5. Разработать упражнения по формированию академической компетенции и методическую систему обучения академическому письму.

Научная новизна исследования. Установлены типичные трудности обучения академическому письму в национальной аудитории. Разработана методическая система обучения академическому письму, в основе которой лежит четырехступенчатая модель отбора академических текстов и дискурсов, упражнений и задач. Каждый метод и методический прием, средства и формы рассматриваются в качестве неотъемлемой части предлагаемой методической системы. Проведено поэтапное обучение академическому письму с использованием альтернативных методов и технологий. Путем опытного обучения обоснована эффективность упражнений, направленных на усвоение академического письма.

Теоретическое значение исследования:

- Изучена научно-педагогическая и методическая литература по обучению академическому письму.
- Выявлены особенности обучения академическому письму профессионального курса английского языка.
- Уточнены содержательные и функциональные характеристики обучения академическому профессиональному курсу английского языка.
- Создана эффективная модель обучения академическому письму, которая лежит в основе предложенной методической системы.

Практическое значение исследования.

Разработанная система упражнений может способствовать развитию умений и навыков академической письменной речи. Предложены критерии анализа и оценки умений и навыков академического письма, которые могут быть использованы в разных курсах обучения английскому языку, составлению конкретных программ, планированию и проведению уроков.

Содержание исследования. Диссертация объемом 135 страниц компьютерного текста состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений. В ней содержатся 5 таблиц и 8 схем.

По теме диссертации опубликовано шесть научных статей.

BARSEGHIAN ZORI LERNIK
TEACHING ENGLISH ACADEMIC WRITING FOR LANGUAGE SPECIALTIES

**Thesis for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty
13.00.02 – “Teaching and Education Methodology” (English).**

The defence of the thesis will be held at 12⁰⁰ on May 30, 2018, at the session of the Special Board 020 “Pedagogy” HAC (Higher Attestation Commission) to award scientific degrees at Kh. Abovyan Armenian State Pedagogical University. Adress: 0010, 17 Tigran Mets ave., Yerevan.

SUMMARY

The relevance of the research. The course "Academic Writing" is being designed and organized in the developed countries of Europe and America. Various aspects of it are studied in the RA system of higher education. However, as a compulsory subject, it ends up in the Republic of Armenia in the framework of a post-graduate education.

Taking into account the need to improve the methodological system of forming and developing academic writing skills in the professional English course, the task is formulated to develop appropriate programs, new models, use modern technologies and strategies, and design specific courses on the continued development of academic competence. The above tasks determine the relevance of this study.

The aim of the research is to develop an effective model of selecting and applying technologies that can be effectively used in academic writing course.

The objectives of the research.

1. To study and analyze the relevant scientific and methodological literature on this issue.
2. To reveal and identify peculiarities and common difficulties encountered in teaching academic writing.
3. To specify the purpose and objectives of teaching academic writing, taking into account the features of its theoretical and practical courses.
4. To identify modern strategies and technologies for teaching academic writing at the stages of its planning, projecting, reviewing, monitoring.
5. To identify the stylistic and genre features of academic speech and create a system of exercises for developing academic competencies.

Scientific novelty of the research. A typical set of common difficulties connected with teaching academic writing in the national setting has been revealed. A methodological system for teaching academic writing is developed, which is based on a four-stage model for selecting academic texts and discourses, exercises and tasks. The methods and methodological devices, tools and forms are considered as an integral part of the proposed methodological system. Stage-by-stage academic writing teaching with an employment of alternative methods and technologies has been carried out. Through skillful experimental teaching the efficacy of the exercises aimed at the acquisition of academic writing has been proved.

Theoretical significance of the research.

- It studies the scientific-pedagogical and methodological literature on teaching academic writing.
- It reveals the peculiarities of teaching academic writing in the professional English course.
- It identifies the content and functional characteristics of the academic English course.
- It creates an effective model of teaching academic writing, which underlies the proposed methodological system.

Practical significance of the research.

The developed system of exercises for working with academic texts can contribute to the development of the habits and skills of academic writing. The developed criteria for analyzing and evaluating academic writing habits and skills can help to organize different English language courses, develop specific programs, plan and implement lessons.

Structure and volume of the thesis.

The content of the research is reflected in the structure of the dissertation, which consists of an introduction, two chapters, conclusion, bibliography and appendices. It contains 5 tables and 8 charts. The main content of the thesis is set out on 135 pages.

Six scientific articles have been published on the topic of the thesis.

A handwritten signature in black ink, appearing to read "Геннадий" (Gennadiy).

